259 Չկա հույս ինձ համար,

1. Չկա հույս ինձ համար,
Չկա հույս երանելի,
Ախ, ես ինչքան դժբախտ եմ,
Եվ առանց Քեզ՝ վշտալի:
Ով Հիսո՛ւս, լույս աշխարհի,
Քեզ կանչում եմ, բաղձալի՛ս,
Ծանր է կյանքս, մեղսալի,
Բոլոր մեղքերս ներիր:

2. Քաղցրությամբ ինձ մոտ եկար,
Իմ սրտի մեջ տեղ գտար,
Ախ, ես ինչքան ուրախ եմ,
Երջանիկ ու խաղաղ եմ:
Ազատվեցի ախտերից,
Կյանք ստացա ես նորից,
Նա չի թողնի երբեք ինձ՝
Այս է խոստումը վերից:

3. Երջանիկ եմ ես հիմա,
Որ Տերն իմ մեջ կմնա,
Ու ես Նրան ուխտել եմ,
Որ բաժինս կատարեմ:
Ով Հիսուս, լույս աշխարհի,
Քեզ կանչում եմ, բաղձալի՛ս,
Համայն աշխարհ թող լսի՝
Դու ես հույսը սուրբերի: